




ԱԱ. ՅՈՒՆՈՒԱՐ. ԶԻՀՈՍ. — Ամսուն անունը առնուած է Հանուարէս բառէն, որ ըսել է Հանոսականք, այսինքն է Հանոս չաստուծոյն տօնը՝ տարւոյն սկիզբը :

Գրհոսը կը ցուցընէ աս ամսուս մէջ եկած յորդ անձրևները . իսկ առասպելեալ նշանակութիւնն աս է . Տրոյիոյ թագաւորին Պանիմեդէս անունով որդին Արամազդայ սիրելի ըլլալով իրեն մատուածել եղաւ . օր մը ասիկայ Խոտալերան վրայ որսի ելած ատենը, Արամազդայ արծիւը խլեց զինքը, տարաւ երկինքը՝ կենդանակերպից կարգը դրաւ :



ԱԲ. ՓԵՏՐՈՒԱՐ. ԶԿՈՒՄՔ. — Ամսուն անունը առած է լատինացւոց Քէպրոս թայէն, որ քաւելկամ սրբել ըսել է . վասն զի ան ամսուն մէջ հին Հռոմայեցիք զանազան զոհեր կ'ընէին իրը թէ իրենց քաղաքին մեղքերը սրբելու մտքով :

Իսկ ձկները ըստ առասպելաց կը ցուցընեն ան ձկները՝ որոնց վրայ հեծան Արտղիկ ու իր որդին Խրոս, և Տիփոն հսկային ձեռքէն փախչելով՝ Խփրատ գետէն անդին անցան ազատեցան : Այս ձկներուն հայրն ալ, կ'ըսէ Ովիդիոս բանաստեղծը, օր մը Խախ դիցուհոյն ծարւած ատենը ջուր խմցուցեր էր :

Ո՛հ առասպելներ . ափսոն որ հի-

ները աւելի օգտակար և մեծ դիպուածներու տեղ՝ մեծ մասը ասանկ չնշին բաներու յիշատակներ դրին երկնքին երեսը . մեզի ալ անհաճոյ պարտք մը ըրբին որ ասանկ առասպելներուն Ճիշդ նշանակութիւնը չգիտ նալով՝ տգէտ սեպուինք, և գիտնալով ցաւինք հեթանոսաց թեթևա մտութեանը վրայ :

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

(Դատին ժողովը հադրելու հարբ :

ԱՌ հաւասար չափով պարարտ հողու վառած փայտի մոխիր, չորս մասին մէկուն չափ ալ կովու թրիք . ասոնց վրայ այնչափ ջուր լեցուր որ ջրի շաղախի պէս ըլլայ . ծառերուն բուները աս շաղախով ծեփէ, յետոյ ուրիշ խոզանակով մըն ալ շփէ, ինչուան ծեփին ու քոսերը թափթթին . ետքը պարզ կամ կրախառն ջրով ալ մէյլը վրայէն անցիր : Այս գործողութիւնը տարին երկու անգամ ընելու է՝ ապրիլու օգոստոս, կամ աւելի աղեկ՝ մայիս ու սեպտեմբեր ամիսներուն մէջ պըղատու ծառոց վրայ :

ԱՄ-ՏՆԻՒ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ

Վաւուած հային չշաները :

Ա Ա Տ փորձերով տեմնուած են մըք լոտած հացին վտանգները . և անկէ առաջ եկած մնամները այնպէս սաստիկ են՝ ինչպէս զօրաւոր թունէ առաջ եկածները : Ա անը տղաք աւելի շուտ կը վնասուին այսպիսի հաց ուտելով . վասն զի հիւթերը անոնց գլուխը կը ժողվին, խօստուկ, սրտի խառնուք, քնափութիւն կ'ունենան, երեմն ալ սաստիկ դող . ասանկ ատեն